

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի հոկտեմբերի 29-ի ընտրական օրենսգրքի 146-րդ հոդվածում՝

1) վերնագրում «Անցումային դրույթ» բառերը փոխարինել «Անցումային դրույթներ» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս՝

«2. Սահմանել, որ մինչև Արցախի Հանրապետության Սահմանադրության 173-րդ հոդվածով նախատեսված օրենսդրական կարգավորումներն ուժի մեջ մտնելը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2006 թվականի Սահմանադրությամբ սահմանված ժամկետով ընտրված համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի պաշտոնավարման ժամկետը լրանալու կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում այդ պաշտոններում նշանակվում են պաշտոնակատարներ՝ գյուղական համայնքներում՝ համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարի, իսկ քաղաքային համայնքներում՝ համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարի ներկայացմամբ կառավարության որոշմամբ:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2016 թվականի ապրիլի 14-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ՝

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**  
**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ**  
**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՕՐԵՆՔԻ**  
**ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

1.	<p style="text-align: center;"><b>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</b></p>
	<p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝</p> <p>- Արցախի Հանրապետության 2017 թվականի Սահմանադրության առաջնահերթ նպատակներից է տեղական ինքնակառավարման ինքնուրույնության ապահովման անհրաժեշտ ու բավարար սահմանադրական երաշխիքների ամրագրումը և այդ նպատակով առանձին դրույթների վերանայումը: Սահմանադրությամբ սահմանվել է, որ Արցախի Հանրապետության վարչատարածքային միավորներն են համայնքները, հետևաբար Սահմանադրությանը գործող օրենսդրության համապատասխանեցման օրակարգում է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում անհրաժեշտ փոփոխությունների կատարումը:</p> <p>- 2017 թվականի սեպտեմբերի 7-ից ուժի մեջ է Արցախի Հանրապետության Սահմանադրության 8-րդ գլուխը, որը տեղական ինքնակառավարման ոլորտում նախատեսում է 2006 թվականի Սահմանադրությամբ ամրագրված նորմերից տարբերվող նոր իրավակարգավորումներ, որոնց պետք է համապատասխանեցվի գործող օրենսդրությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքը և «Տեղական ինքնակառավարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը, Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների համակարգման խորհրդի կողմից հաստատված ժամկետներում:</p>
2.	<p style="text-align: center;"><b>Առաջարկվող կարգավորման բնույթը</b></p>
	<p>Հաշվի առնելով վերոգրյալ օրենքներում նախատեսվող փոփոխությունները, անցումային փուլում առանձին համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպումը և անցկացումը արդարացված չէ, քանի որ սահմանադրական բարեփոխումների համատեքստում նախատեսվող օրենսդրական փոփոխությունների արդյունքում կփոխվի Արցախի Հանրապետության վարչատարածքային բաժանումը, ինչպես նաև համայնքների և դրանց ինքնակառավարման մարմինների կարգավիճակը: Բացի այդ, գործող տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը</p>

	<p>լրանալու կամ այդ լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքերում Արցախի Հանրապետության Սահմանադրության անցումային դրույթներով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման պահանջ ուղղակիորեն չի սահմանվում և նպատակահարմար է դրանք անցկացնել վերոնշյալ օրենսդրական փոփոխությունները կատարելուց հետո՝ տեղական ինքնակառավարման մարմինների միասնական ընտրությունների անցկացման համար նշանակված օրը:</p> <p>Գտնում ենք, որ, մինչև վերոթվարկյալ միջոցառումների իրականացումը ստեղծված իրավիճակում համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեության շարունակականությունն ապահովելու հնարավոր լուծումը համայնքներում կառավարումը պաշտոնակատարների միջոցով իրականացնելն է:</p>
3.	<p align="center"><b>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</b></p>
	<p>Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի կողմից:</p>

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԻ  
ՆԱԽԱԳԾՈՎ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՅՎՈՂ ՀՈԴԿԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 146. ~~Անցումային դրույթ~~ Անցումային դրույթներ**

1. Համայնքում ավագանու անդամների թվի՝ սույն օրենսգրքի 128-րդ հոդվածով սահմանված թիվը գործում է այն համայնքների դեպքում, որտեղ ավագանու անդամների ընտրությունները նշանակվել են սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո:

2. *Սահմանել, որ մինչև Արցախի Հանրապետության Սահմանադրության 173-րդ հոդվածով նախատեսված օրենսդրական կարգավորումներն ուժի մեջ մտնելը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2006 թվականի Սահմանադրությամբ սահմանված ժամկետով ընտրված համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի պաշտոնավարման ժամկետը լրանալու կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում այդ պաշտոններում նշանակվում են պաշտոնակատարներ՝ գյուղական համայնքներում՝ համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարի, իսկ քաղաքային համայնքներում՝ համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարի ներկայացմամբ կառավարության որոշմամբ:*

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ